ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Նարինե Աշոտի Ավագյանի «Անհատականացման միջոցների քաղաքացիաիրավական պաշտպանությունն անբարեխիղճ մրցակցությունից» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Զարգացող շուկայական տնտեսության պայմաններում անհատականացման միջոցների լայն կիրառումը հանգեցնում է առողջ մրցակցության առաջացմանը: Մի կողմից աճում է ձեռնարկատիրական գործունեության արդյունավետությունը, աճում է ապրանքների, ծառայությունների որակը, մրցունակությունը, իսկ մյուս կողմից անբարեխիղճ մրցակցության արդյունքում անհատականացման միջոցների նկատմամբ իրավունքների խախտումների թիվն է աճում, ինչը բացասաբար է անդրադառնում քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցների վրա: Հետևապես տնտեսության շարունակական զարգացումը որպես առաջնահերթություն հռչակած յուրաքանչյուր պետության համար անհատականացման միջոցների պաշտպանության հարցը կարևոր նախապայմաններից է և համակողմանի ուսումնասիրություն է պահանջում: Վերը նշվածից բացի թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև անհատականացման միջոցների վերաբերյալ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի վարույթների մեծ քանակը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» նոր օրենքի մշակումը:

Հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկել անհատականացման միջոցների դերն ու նպատակը, տվել դրանց դասակարգումը, մանրամասն վերլուծել մտավոր սեփականության իրավունք դիտվող անհատականացման միջոցները: Այս համատեքստում հեղինակը անդրադարձել է մտավոր սեփականության իրավունքների առաջացման պատմությանը, այն նպատակներին, որոնք ընկած են մտավոր սեփականության իրավունքներին պահպանություն շնորհելու հիմքում: Արդյունքում հեղինակը առաջարկել է մտավոր սեփականության իրավունքի օբյեկտների շարքից հանել այն անհատականացման միջոցները, որոնք չեն բավարարում մտավոր

սեփականության իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ չափանիշները: Մասնավորապես, հեղինակը մանրամասն վերլուծելով յուրաքանչյուր անհատականացման միջոցի դերն ու նպատակները, առաջարկել է մտավոր սեփականության իրավունքի օբյեկտների շարքից հանել ֆիրմային անվանումները, աշխարհագրական նշումները, ծագման տեղանունները և երաշխավորված ավանդական արտադրանքը:

Հեղինակը վերլուծելով առևտրային իրավաբանական անձանց ֆիրմային անվանումները և ոչ առևտրային իրավաբանական անձանց անվանումները՝ արդարացիորեն հանգել է այն եզրակացության, որ դրանք նույն գործառույթն են կատարում և անհրաժեշտ են, որպեսզի իրավաբանական անձը կարողանա հանդես գալ քաղաքացիաիրավական շրջանառությունում և այլ սուբյեկտներ նույնականացնեն վերջիններիս: Հետևաբար պաշտպանությունը ուղղված է քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը, որպիսի պայմաններում երկուսն էլ պետք է օգտվեն պաշտպանության նույնպիսի մեխանիզմներից: Ընդ որում հեղինակի եզրահանգումները հիմնված են տարբեր երկրների փորձի ուսումնասիրության վրա:

Հեղինակը առաջարկում է ապրանքային նշանների տարբերակիչ բնույթին կամ համբավին պատճառված վնասի համար կիրառել գույքային պատասխանատվության հստակ չափ՝ համապատասխան փոփոխություններ նախատեսելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում:

Հեղինակը մանրամասն քննարկման առարկա է դարձրել անբարեխիղճ մրցակցության առաջացման նախադրյալները, դրա հարաբերակցությունը դելիկտներին, հակամրցակցային իրավունքին և մտավոր սեփականության իրավունքներին: Վերլուծելով տարբեր երկրների փորձը և հաշվի առնելով մեր երկրի առանձնահատկությունները՝ հեղինակը առաջարկում է խուսափել գերկարգավորումներից և անբարեխիղճ մրցակցությունը կանխարգելող նորմերը չկիրառել այն անհատականացման միջոցների խախտման նկատմամբ, որոնք արդեն իսկ կարգավորվում են այլ օրենքներով: Մասնավորապես Հեղինակը առաջարկում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքից հանել այն կարգավորումները, որոնք արդեն իսկ նախատեսված են մտավոր սեփականության օրենսդրությամբ:

Հեղինակի կողմից կատարվել են տեսական եզրահանգումներ, ներկայացվել են տեսական հասկացություններ, իսկ գործնական առաջարկները արտացոլվել են համապատասխան օրենքներում փոփոխություն կատարելու հստակ ձևակերպումներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից և եզրահանգումներից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից

Հետազոտության տեսական հիմքը կազմել են անհատականացման միջոցների և անբարեխիղճ մրցակցության ինստիտուտին նվիրված հայրենական և արտասահմանյան աղբյուրները:

Նարինե Ավագյանի ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել հնարավորինս համալիր և բազմակողմանի քննարկել ու վերլուծել անհատականացման միջոցների և դրանց օգտագործման արդյունքում անբարեխիղճ մրցակցության ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրները: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանը վերաբերող առաջարկներում:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են իմացության դիալեկտիկական, ձևական-իրավական, համեմատական-իրավական և այլ գիտական մեթոդներ, որոնց կիրառումը թույլ է տալիս ատենախոսի հետևությունները և առաջարկությունները համարել գիտականորեն հիմնավորված և հավաստի:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել օրենսդրական բարեփոխումների, կիրառման ժամանակ մեկնաբանությունների համար:

Հեղինակն օգտվել է հայրենական և արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից և իրավական փաստաթղթերից, ինչն, անշուշտ, հարստացրել է ատենախոսության բովանդակությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, հարկ է նշել, որ ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի հստակությամբ, դրա բովանդակությունն արտացոլող դրույթների միջև գոյություն ունեցող տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև Հեղինակի որոշ ինքնատիպ դատողություններով: Արժանահիշատակ է, որ Հեղինակը իրավական երևույթները բացատրելիս դրանք ավելի ակնառու դարձնելու համար փոխաբերություններ է մեջ բերել տարբեր բանաստեղծներից:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված գիտական հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միևնույն ժամանակ, ուսումնասիրված ատենախոսությունը, ինչպես ցանկացած աշխատանք, զուրկ չէ վիճելի դրույթներից և առանձին թերություններից, որոնց վերաբերյալ ներկայացվում են հետևյալը.

1.Պաշտպանության ներկայացվող դրույթներից 1-ին կետի ներքո արտացոլված դատողությունները մեր կարծիքով բավականաչափ հիմնավորված չեն: Հեղինակը առաջարկում է ֆիրմային անվանումները հանել մտավոր սեփականության իրավունքի օբյեկտների շարքից և դիտարկել նույն իրավական ռեժիմի ներքո, ինչ անվանումներն են: Մինչդեռ աշխատանքը կշահեր, եթե Հեղինակը հիմնավորեր, թե ինչու անվանումներին չպետք է տալ ավելի ուժեղ պաշտպանություն՝ մտավոր սեփականության իրավունքի նորմերով՝ հաշվի առնելով, որ, օրինակ, հասարակական կազմակերպությունները ևս կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ և շահագրգռված են իրենց անվանումը պաշտպանել բացառիկ իրավունքներով:

2. Պաշտպանության ներկայացվող դրույթներից 5-րդ կետը շատ խոցելի է, քանի որ դրույթի հիմքում դրվում է հանրային և մասնավոր շահերի տարբերակման կոնցեպտը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությունը, որը պաշտպանում է բացառապես հանրային շահեր, ազատ տնտեսական մրցակցությունը համարում է ՀՀ տնտեսության հիմքը, հետևաբար այս համատեքստում, երբ խոսքը գնում է անբարեխիղճ մրցակցության կամ ապրանքային նշանների պաշտպանությանը, այս շահերը զուգակցվելու են: Բացի այդ, անտարակույս է, որ արտադատական կարգով վեճերի լուծումն ավելի քիչ ծախսատար և արագ է, և արտադատական կարգով վեճերի լուծումից հրաժարումը պետք է լրացուցիչ հիմնավորվի: Ճիշտ է որպես այլընտրանք առաջարկվում է վեճերի լուծման այլընտրանքային եղանակները, սակայն այս առումով վերլուծությունները թերի են:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հեղինակը ատենախոսության տարբեր էջերում ներկայացրել է օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ, աշխատանքը կշահեր, եթե Հեղինակը համակարգեր նման առաջարկությունները և որպես ՀԱՎԵԼՎԱԾ ներկայացներ առաջարկվող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ:

Այս ամենով հանդերձ, հարկ է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ: Նարինե Ավագյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժևոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Նարինե Աշոտի Ավագյանի «Անհատականացման միջոցների քաղաքացիաիրավական պաշտպանությունն անբարեխիղճ մրցկացությունից» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսի կարծիքին ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.03 մասնագիտությանը Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք), բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ **Ա.ՀԱՅԿՅԱՆՑ**

01.06.2021թ

«Ա.Հայկյանցի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Հ.ԽԱՉԻԿՅԱՆ